

ԱՊՐԻԼԵԱՆ ԶՈՋԵՐՈՒՆ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԴԱՏՐ

Սիրելի Հայրենակիցներ,

1966ի փետրուար 7ին, Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տէրն, Տ. Իգնատիոս – Պետրոս ԺԶ. Պաքանեան, Կաթողիկոս – Պատրիարք Կաթողիկէ Հայոց՝ Մեծ Եղեռնի Հայ Զոհերուն նահատակութեան եւ սրբադասման դատին համար Աղերսարկու անուանեց Արհի. Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Թերզեանը, որ ամիսներէ ի վեր ձեռնարկած է այս նուիրական գործին, եւ վաւերաբուղքեր կը հաւաքէ եւ գրաւոր վկայութիւններ կ'ընդունի, որոնք կրնան ծառայել փաստելու՝ Քրիստոնէական Սուրբ Հաւատքին համար նահատակութիւնը մեր Զոհերուն:

Դիւրացնելու համար այս դժուարին եւ սրբազան գործը, կը խրնդրենք Ձեզմէ որ բարեհաճիք փաստաբուղքեր եւ գրաւոր վկայութիւններ հաղորդել եւ մեր Զոհերուն նահատակութեան ականատես կամ ականջալուր վկաներու հասցէները ղրկել Պէյրութի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանը, հետեւեալ հասցէով.

S. E. Mgr. Mesrob Terzian
Patriarcat Arménien Catholique
(Liban) Achrafieh – BEYROUTH

Սիրովը մեր նահատակներուն մնամ՝

Ձերդ աղօթարար
ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ԹԵՐԶԵԱՆ
Աղերսարկու Հայ Նահատակներու Դատին

ՌԻՂՂԵԼԻ («Բազմավէպ»ի 1966ի նախորդ քիւներուն մէջ)

Էջ 57, սիւնակ ա, վարէն տող 5րդ
Abbot or our — Abbot of our

Էջ 57, սիւնակ ա, վարէն տող 5-3րդ
Note the omission, in the translation, of the name of the convent.
The compiler of the Index obviously inserted the name of Atish because he had read in the beginning....

Էջ 106, սիւնակ ա, վարէն տող 18րդ
կը ստիպուէր «ղզէ՛» կը նկատուէր

Էջ 107, սիւնակ ա, վարէն տող 5րդ
(treffer state) «ղզէ՛» (buffer state)

Էջ 108, սիւնակ բ, վերէն տող 11րդ
ցրուեց «ղզէ՛» դրուեց

